

Խտրականությունն արգելիլը օրենքի ընդունումը՝ անհրաժեշտություն



ՀՀ-ում փորձ է կատարվում ընդունել խրականությունն արգելիլ նոր օրինագիծ: Այս շրջանակներում Եվրասիա համագործակցություն հիմնադրամն (ԵՀՀ) անցկացրեց «Խտրականությունն արգելիլ օրենսդրության ընդունումը: Լրատվամիջոցների դերը» խորագրով կլոր-սեղան քննարկում: Այն ավելի գործնական բնույթի էր, որի նպատակն էր քննարկել նախ օրենքի կարևորության, այնուհետև այդ գործընթացում լրատվամիջոցների դերին վերաբերող հարցեր: Բանախոսները կարևորեցին լրատվամիջոցների դերակատարությունը: ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ Արտյոմ Սեդրակյանը հիմնավորեց, թե ինչու ՀՀ-ում նման օրենքի ընդունման կարիք կա. «Ընդամենը մեկ տարի առաջ մեզ թվում էր, թե խտրականության վերաբերյալ մենք ունենք բավականին շատ օրենսդրական նորմեր տարբեր օրենքներում: Բայց երբ «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի պատվերով իրականացվեց

հետազոտություն, պարզ դարձավ, որ նման օրենքի անհրաժեշտություն կա»:

Կարևորվեց այն փաստը, որ նախաձեռնությունն իրականանում է պետական մարմնի և քաղհասարակության հետ համագործակցության արդյունքում: Ծրագրի տնօրեն Իզաբելլա Սարգսյանը շեշտեց, որ այս օրենքը պետք է ոչ թե կոնկրետ խմբի մարդկանց, այլ բոլորիս, քանի որ յուրաքանչյուր ոք կարող է առնչվել խտրական վերաբերմունքի: Սոցիոլոգ, ԵՀՀ-ի կողմից իրականացված փորձագիտական հետազոտության համահեղինակ Գայանե Հովակիմյանը նշեց, որ իրենց կատարած հետազոտություններն ուղված են եղել հասկանալու՝ մարդկանց տարբեր խմբեր հասկանո՞ւմ են խտրականության կանխարգելման անհրաժեշտությունը, թե՛ ոչ: Հետազոտությունը ցույց է տվել, որ անխտիր բոլոր մասնակիցներն ընկալում էին խտրականությունը՝ որպես խնդիր և գտնում, որ ՀՀ-ում կա խտրականություն.

«Պետական կառավարման համակարգում կար ընկալում, թե առաջին հերթին այն ազգային մտածողության խնդիր է, իսկ քաղհասարակության շրջանում գերակշռող էին այն կարծիքները, որ դա օրակարգային հարց է»: Վրաստանում և Հայաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան քաղաքական գծով պատասխանատու Նինո Բոլկվաձեն խոսեց Վրաստանի դասերի մասին: Վրաստանում այսպիսի օրենք արդեն գործում է: Բանախոսն ասաց.

«Հասարակությունը սկզբում երկու մասի էր բաժանված. ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք փոքր հատված էին կազմում և կարծում, որ պետք է ընդունել նման օրենք և հասարակության մեծամասնությունը, որը բացասաբար էր վերաբերվում նման օրենքի ընդունմանը: Անգամ հոգևորականները պատգամավորներին ասում էին, որ եթե ընդունեք այդ օրենքը, կարծանանաք մեր անեծքին: Արդյունքում օրենքն ընդունվեց, իհարկե, ավելի մեղմ տարբերակով: Այնուամենայնիվ կարևորն առաջին քայլն է, կարևոր գործն այդ առումով արված է»:

Aravot.am-ի հարցին՝ ընդունման դեպքում ինչպե՞ս կանդրադառնա նոր սահմանադրությունը խտրականության կանխարգելման մասին օրենսդրության վրա, պարոն Սեդրակյանը պատասխանեց. «Այն որևէ առումով չի կարող բացասական ազդեցություն ունենալ տվյալ օրենքի որակի վրա: Այն չի պարունակում որևէ դրույթ, որը հետքայլ է մի խումբ անձանց մեկ այլ խումբ անձանց միջև հավասարություն չդնելու առումով»: «Արնի Քոնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն Արա Ղազարյանի կարծիքով՝ նոր սահմանադրության տեքստում կան այնպիսի ունիվերսալ սկզբունքներ, ասենք համաչափությունը, որոնք միանշանակ օգնելու են խտրականության մասին օրենսդրության հարցում: Իզաբելլա Սարգսյանը, այնուամենայնիվ, որոշ մտահոգություններ ունի. «Այս նախագծում կան ակնհայտ վտանգներ կրոնի, հավաքների ազատության մասով, քանի որ հանրային անվտանգություն եզրույթը նոր տեքստում փոխարինված է պետական

անվտանգություն տերմինով: Սակայն դեռ փաստ չէ այն, որ այս սահմանադրության նախագիծը պետք է անցնի»: Արա Ղազարյանն ի պատասխան նկատեց, որ եթե անգամ պետական անվտանգություն բառը շատ է հոլովվում սահմանադրությունում, միևնույն է, այդ հարցերը կարելի է կարգավորել օրենքով: